Հայաստանի Հանրապետության վարչապետ

Հովիկ Աբրահամյանին

Հարգելի պարոն Վարչապետ.

Ձեր հանձնարարականով ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը պատասխանել է (նամակ թիվ 01/19.1/3579-15, 09.07.2015 թ.) Ձեզ ուղղված մեր առաջարկություններին (նամակ թիվ 2323, 26.06.2015 թ.):

Նշված նամակի պատճենը ուղարկվել է նաև ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանին:

Ձեր հանձնարարականը շատ արագ կատարվեց ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից, սակայն «բացատրությունների» որակը, հիմնականում, դեկլարատիվ բնույթ է կրում է և իր ոգով համահունչ է ոչ հեռու անցյալում հայրենական բյուրոկրատիայի՝ «զանգվածներին ուղղված բացատրությունների» մեծ մասին:

Փորձեմ բացատրել.

1. Թվում էր, թե հաշվի առնելով մեր երկրի ֆինանսա-տնտեսական շատ ծանր իրավիճակը, ՀՀ կառավարությունը կմշակի առաջարկություն՝ պետական ապարատի պահպանմանն ուղղված երկրի բյուջեի ծախսատար հոդվածների (և արտաբյուջետային միջոցների) վերանայման համար, և այդ առաջարկությամբ կմտնի ՀՀ Ազգային ժողով: Ձեզ ուղղված իմ նամակում հարց չէր բարձրացվում ոչ նպատակային ծախսերի կրճատման մասին: Խնդիրն այն է, որ պետական կառույցներում գոնե մի որոշ ժամանակահատվածում մտցվի խիստ խնայողության համակարգ և կրճատվի հենց նպատակային ծախսերը, որոնք, որպես կանոն, ձևավորվել են այս կամ այն ղեկավարի փառամոլության բավարարման համար: Կարելի է բազմաթիվ օրինակներ բերել, սակայն խոսքն այդ մասին չէ: Ձեր իրազեկվածությամբ դժվար չէ արագորեն բացահայտել

անձնական նպատակներով պետական միջոցների ոչ նպատակային ծախսերի դեպքերը:

2. Ենթադրվում էր, որ, չսպասելով հայկական և ռուսական կողմերի ֆինանսական և տեխնիկա-տեխնոլոգիական աուդիտի կազմակերպմանը, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը նպատակահարմար կգտներ.

- Իրականացնել իրացվող էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական կորուստների կառուցվածքային վերլուծություն (ըստ ստանդարտի դրանք պետք է լինեն ոչ ավելի, քան 5-6 տոկոս).
- Որոշել ով կամ ինչն է ՀԷՑ-ի պլանավորած եկամուտ չստանալու պատճառը, և ինչքան պետք է լինի շահույթի նորման ՀԷՑ-ի նման համակարգի համար (պարամետրերը. սպառողների քանակը. տեխնիկական հագեցվածության աստիճանը. ամորտիզացիայի մակարդակը, աշխատակազմի թվաքանակը և այլն).
- Որոշել, թե որքան է դեբիտորական պարտքի մեծությունը ըստ էլեկտրաէներգիա սպառողների խմբերի և տեսակների.
- Իրականացնել ծախսված էլեկտրաէներգիայի վերահսկողական չափումներ խոշոր սպառողների օբյեկտներում.
- Մշակել էլեկտրաէներգիայի արտադրության և ծախսի ճյուղային հաշվեկշիռ՝ արժեքային և բնեղեն արտահայտությամբ.
- Որոշել, թե ում մեղքով և ինչով է պայմանավորված շուկայի մյուս մասնակիցների ծախսերի աճը.
- Եվ այլն:

Եթե ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը, ներառյալ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, գտնում են, որ իրենց գործունեությունը քննադատությունից դուրս է, ապա ով կարող է բացատրել, թե ինչու է հանրապետությունը հայտնվել էներգետիկ ճգնաժամի մեջ:

3. Ակնհայտ է, որ շատ նախարարություններ և գերատեսչություններ ընթացիկ կազմակերպչական տնտեսական հարաբերություններում չունեն (կամ ձևականորեն ունեն՝ լիցենզիա տալու) վերահսկողության գործառույթներ տնտեսական սուբյեկտների տեխնիկա-տեխնոլոգիական և կադրային գործունեության վրա, անկախ սեփականության ձևից: Միգուցե, նպատակահարմար է վերանայել ներկայիս պրակտիկան: Այլապես, բավարարվում ենք միայն լիցենզիա տալով որոշակի

ժամանակահատվածի և համապատասխան գործունեության համար, և դրանով գործն ավարտված համարում:

Փաստորեն, ոչ մի կերպ հնարավոր չէ բացատրել, թե ինչու են ընկնում վերելակները, պայթում գազալցակայանները, երթուղային տաքսիները բնակչությանը սպասարկում «բանող կենդանիների» տեղափոխման մակարդակով, հիվանդանոցներում մահանում (կամ վնասվածքներ են ստանում) երեխաներ և ծննդկաններ, դեղորայքը բնակչությանը վաճառվում է «առասպելական» գներով և այլն:

Քիչ թե շատ զարգացած երկրներում շուկայական տնտեսությունը վերահսկվում է պետության կողմից՝ բնակչությանը առաջարկվող ծառայությունների որակի բարձրացման և հասանելիության ապահովման նպատակով, իսկ մեզ մոտ տարերային զարգացում է, այդ իսկ պատճառով մենք և մեր ամենօրյա կյանքը անվերջ անցման ռեժիմում է զարգանում …

Հ. Գ. Մեր անկախության ողջ ընթացքում Հայաստանի և ոչ մի կառավարություն այդպես էլ ժամանակ չգտավ ծրագրային բացատրություն տալ (ոչ ամբոխահաճո), թե ինչպիսին կլինի մեր տնտեսությունը որակապես և քանակապես 5 կամ 10 տարի հետո: Բնակչությունը (ճնշող մեծամասնությունը) ապրում է այսօրվա օրով, առանց որևէ հեռանկարի: Որպես հետևանք՝ բնակչության մոտ անվստահություն է ձևավորվել իշխանության և նրա անարդյունավետ գործունեության նկատմամբ:

Հարգանքով՝

Լևոն Ներսիսյան

Սախարովի կենտրոնի տնօրեն